

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 81,729,646.4 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 85,801,844.1 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 95.3%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 84,493,669.8 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 80,667,846.4 հազար դրամ՝ ապահովելով 95.5% կատարողական:

Երևան քաղաքի 2021 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 30,694,325.8 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 30,611,350.8 հազար դրամ կամ 99.7%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 6,082,399.0 հազար դրամով:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 80,353,278.8 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 73.3%-ը: Նախատեսված և փաստացի ծախսված գումարների տարբերությունները հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով, պատվիրակված լիազորությունների մասամբ չիրականացմամբ:

Հարկ է նշել, որ 2021 թվականի բյուջեի ծրագրված (ճշտված) 23,835,086.9 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 1,376,367.6 հազար դրամ հավելուրդով:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Երևանի 2021 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 26.2%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 8.8%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 12.6%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.1%-ը՝ տեղական տուրքերից, 0.7%-ը՝ համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 26.4%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհներից, 47.4%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.1%-ը՝ շահաբաժիններից, 1.5%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 36.2%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 7.9%-ը՝ վարչական գանձումներից, 0.9%-ը՝ տույժերից, տուգանքներից, 0.7%-ը՝ այլ եկամուտներից :

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների հավաքագրումը 2021 թվականին գերակատարվել է, մասնավորապես գույքային հարկեր անշարժ գույքից հավաքագրվել է 7,166,984.6 հազար դրամ՝ որը կազմել է ծրագրվածի 110.7%-ը, որը կազմում է հարկային եկամուտների 33.4%-ը, իսկ փոխադրամիջոցների համար գույքահարկը հավաքագրվել է ծրագրվածից 1,633,140.9 հազ. դրամով ավելի, որը իր հերթին կազմում է հարկային եկամուտների 48.0%-ը:

Տեղական տուրքերի մասով եկամտի հավաքագրումը ևս գերակատարվել է՝ փաստացի կազմելով 3,378,808.0 հազ. դրամ ծրագրված 3,184,562.1 հազ. դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 106.1%: Տեղական տուրքերի կազմում 111.3% տեսակարար կշիռ է ապահովել արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար փաստացի հավաքագրված 1,582,883.2 հազար դրամ տուրքը, որը գերակատարվել է 160,383.2 հազ. դրամով: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 594,791.9 հազար դրամ ծրագրված 566,500.0 հազար դրամի դիմաց: Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ

հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար տուրքերը գերակատարվել են 63.1%-ով, համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար տուրքերը 55.2%-ով, համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տուրքերը 36.0%-ով:

Այսպիսով, հարկային եկամուտների և տուրքերի մասով 2021 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 21,424,178.6 հազար դրամ՝ ծրագրված 22,232,317.4 հազար դրամի նկատմամբ:

Այդ թվում՝

-Անշարժ գույքի հարկի և գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 17,450,475.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 18,590,755.3 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 93.9%,

-Տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 3,378,808.0 հազար դրամ՝ նախատեսված 3,184,562.1 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 106.1%,

-Պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 594,895.5 հազար դրամ՝ ծրագրված 457,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 130.2%, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 123,188.7 հազար դրամ 77,000.0-ի դիմաց,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 471,706.8 հազար դրամ՝ 380,000.0-ի դիմաց:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 21,533,936.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 23,809,914.8 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 90.4%, որից << պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 13,430,355.1 հազար դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝

ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով 242,336.9 հազար դրամ, համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով 714,727.9 հազար դրամ, իսկ ՀՀ պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը՝ 6,848,701.4 հազար դրամ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ 297,814.7 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 39,759,611.9 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 38,771,531.9 հազար դրամ, որից.

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 102,471.2 հազար դրամ՝ կանխատեսված 121,366.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 84.4%,

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 1,261,162.0 հազար դրամ, ծրագրված 1,139,193.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 110.7%,

-պետության կողմից կրթության, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքային լուսավորության, կոշտ թափոնների կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 29,584,359.7 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 31.297.603.5 հազար դրամի դիմաց կամ 94.5%-ը,

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 32,914.7 հազար դրամ,

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 5,603,656.5 հազար դրամ, նախատեսված 5,726,829.3 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 97.8%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է աղբահանության վճարների, ինչպես նաև ավտոկայանատեղի վճարների գծով կանխատեսված և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

-ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 836,091.7 հազար դրամ, որն ավել է 636,091.7 հազար դրամով ծրագրված 200,000.0 հազար դրամից,

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 746,459.2 հազար դրամ, նախատեսված 495,100.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 150.8%-ը,

-համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից մուտքերը նախատեսված 5,000.0 հազար դրամի դիմաց կազմել են 2,288.6 հազ. դրամ,

-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 46,157.4 հազար դրամ,

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 540,205.5 հազար դրամ՝ նախատեսված 747,520.0 հազար դրամի դիմաց:

Ծախսեր

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 80,353,278.8 հազար դրամի ծախսեր՝ ծրագրված (ճշտված) 109,636,931.0 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 73.3%-ը: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 98,3%: Ընդամենը փաստացի ծախսերից 75,184,927.4 հազար դրամն ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 23,639,126.9 հազար դրամը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե): Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը կազմել են 18,470,775.5 հազար դրամ:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 40.8%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 33.7%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 12.9 %:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	10,122,417.9	9,895,711.4	97.8%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	9,030,731.0	7,568,983.3	83.8%
Տոկոսավճարներ	4,100.0	3,217.4	78.5%
Սուբսիդիաներ	43,148,783.9	42,296,850.4	98.0%
Դրամաշնորհներ	546,427.9	525,352.9	96.1%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1,108,592.8	1,075,074.4	96.9%
Այլ ծախսեր	20,563,111.7	13,733,750.8	66.8%
Հիմնական միջոցներ	29,645,365.8	23,531,582.4	79.4%

Պաշարներ	8,400.0	0.0	0.0%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-541,000.0	-539,178.0	99.7%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-4,000,000.0	-17,931,597.6	448.3%
Ընդամենը	109,636,931.0	80,353,278.8	73.3%

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	10,048,427.8	9,033,044.3	89.9%
Պաշտպանություն	82,960.0	42,402.1	51.1%
Տնտեսական հարաբերություններ	31,074,415.5	11,777,662.8	37.9%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	13,468,228.8	10,393,020.0	77.2%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	7,196,974.7	4,838,062.4	67.2%
Առողջապահություն	483,840.0	317,800.7	65.7%
Հանգիստ, մշակույթ և կրոն	4,330,327.3	3,567,354.6	82.4%
Կրթություն	32,917,313.1	31,525,878.8	95.8%
Սոցիալական պաշտպանություն	1,658,374.7	1,225,988.8	73.9%
Պահուստային ֆոնդեր	8,376,069.1	7,632,064.2	91.1%
Ընդամենը	109,636,931.0	80,353,278.8	73.3%

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի ծախսերի կատարողականի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների և տնտեսագիտական դասակարգման

հողվածների խմբերի վերլուծությամբ (բացառությամբ պատվիրակված լիազորությունների) նախատեսված ցուցանիշներից փաստացի կատարողականների շեղումը պայմանավորված է ծրագրերի գծով առկա տնտեսումներով:

Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

Խ/Խ	Վարչական շրջանի անվանումը	2021թվականի բյուջեով նախատեսվածը	2021թվականի փաստացի ծախսը	Կատարման %-ը 2021 թ. նախատեսվածի նկատմամբ
1	Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)	83,471,017.9	57,446,187.9	68.8%
2	Աջափնյակ	2,768,656.3	2,492,563.8	90.0%
3	Ավան	1,347,500.0	1,181,979.8	87.7%
4	Արաբկիր	2,632,102.5	2,381,892.5	90.5%
5	Դավթաշեն	1,410,031.3	1,155,051.7	81.9%
6	Էրեբունի	2,243,102.3	1,895,858.7	84.5%
7	Կենտրոն	2,990,472.0	2,596,892.6	86.8%
8	Մալաթիա-Սեբաստիա	3,045,610.6	2,716,208.9	89.2%
9	Նոր Նորք	3,069,528.3	2,734,481.2	89.1%
10	Նորք-Մարաշ	623,021.0	513,542.8	82.4%
11	Նուբարաշեն	585,266.0	490,341.5	83.8%
12	Շենգավիթ	3,371,071.9	2,933,466.0	87.0%
13	Քանաքեռ-Զեյթուն	2,079,550.9	1,814,911.4	87.3%
	ԸՆԴԱՄԵՆԸ	109,636,931.0	80,353,278.8	73.3%

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. **Կառավարման մարմնի պահպանում** ծրագրով 2021 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 9,348,834.6 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 8,694,361.2 հազար դրամ կամ նախատեսվածի 93.0%-ը, որը ավել է 2020 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 1,266,755.2 հազար դրամով: Ծրագրի գծով 2021 թվականի խնայողությունը կազմել է 654,473.4 հազար դրամ, որից միայն աշխատավարձի և պարգևատրման գծով ծախսերի տնտեսումը կազմել է 186,237.3 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով ծախսերը կազմում են՝ 6,287,470.8 հազար դրամ՝ նախատեսված 6,397,429.0 հազար դրամի դիմաց կամ 98.3%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 10-Ա և 2021 թվականի հուլիսի 29-ի N 422-Ա որոշումներով սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 2,008.5 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 1,865 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 915,024.9 հազար դրամ՝ նախատեսված 991,304.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.3%, որը ավել է 2020 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 153,167.4 հազար դրամով:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 202,816.3 հազար դրամ՝ նախատեսված 266,117.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 76.2%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 13,445.7 հազար դրամ նախատեսված 19,306.9 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 161,607.1 հազար դրամ՝ նախատեսված 192491.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 83.9%, որը պակաս է 2020 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 11,828.4 հազար դրամով, և ներառում են փոստային, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների համար տրամադրված գումարները:

Ապահովագրական ծախսերը կազմել են 35,583.4 հազար դրամ՝ նախատեսված 48,531.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 73.3%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական գործընթացն իրականացնելուն:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 37,375.3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 85.1%, որը պակաս է 2020 թվականի փաստացի ցուցանիշից 70.1 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում տարեսկզբից ապահովվել է քաղաքապետարանի թվով 10 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը և այլն:

Ներքին գործուղումների գծով ծախսը կազմել է 343.5 հազար դրամ՝ ճշտված 1,009.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 34.0 %:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 10,957.8 հազար դրամ՝ նախատեսված 27,792.0 հազար դրամի դիմաց, կատարողականը կազմել է 39.4 %, կամ խնայողությունը կազմել է 16,834.2 հազար դրամ: Գործուղումներ են կազմակերպվել դեպի Բրյուսել, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նովոսիբիրսկ, Դոնի Ռոստով, Սոչի, Կիև, Օդեսա և բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման համար ծախսերը կազմել են 3,977.8 հազար դրամ՝ նախատեսված 11,770.0 հազար

դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 33.8%, որն պակաս է 2020 թվականի փաստացի ցուցանիշից 2,170.1 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 44,014.0 հազար դրամ՝ նախատեսված 45,113.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 97.6%-ով, ինչը ներառում է քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, ինչպես նաև վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 1,446.3 հազար դրամ՝ նախատեսված 7,362.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 19.6%-ով: Նշված գումարի շրջանակներում իրականացվել է թվով 129 համայնքային ծառայողների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 16,019.3 հազար դրամ՝ նախատեսված 22,593.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 70.9%-ով, ինչը ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 4,738.9 հազար դրամով: Այս ծախսերը ներառում են պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական ծառայությունների ձեռք բերման ծախսերը:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 5,782.2 հազար դրամ՝ նախատեսված 5,900.0 հազար դրամի դիմաց կամ 98%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2020 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունների ձեռք բերումը:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 21,905.5 հազար դրամ՝ նախատեսված 40,727.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է շուրջ 53.8%-ով, ինչի շրջանակներում ապահովվել է Երևան

ժամանած պատվիրակությունների ընդունելությունը, հյուրասիրությունը, հուշանվերների ձեռք բերումը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի երդմնակալության արարողության պաշտոնական պատվիրակության ընդունելության ծախսերը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանման ծախսերը՝ 39,831.8 հազար դրամ, որից 3,198.0 հազար դրամը սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայությունները և 36,633.8 հազար դրամը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի հասարակական կարգի պահպանման ծառայությանը: Ծրագրի գծով նախատեսված ցուցանիշը կատարվել է 86.9%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 11,453.2 հազար դրամ՝ նախատեսված 18,658.5 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 61.4%-ով, ինչը 3,164.5 հազար դրամով ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, Երևանի քաղաքապետարանին սեփականության իրավունքով պատկանող լրիվ մաշված, դուրս գրման ենթակա հիմնական միջոցների, գույքի գնահատման, տրանսպորտային միջոցների գնահատելու, վերագնահատելու և օտարելու գործընթացի կազմակերպման ծառայությունը, գազասպառման համակարգի սպասարկման, ինչպես նաև հնոցապանի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 200,104.4 հազար դրամ՝ նախատեսված 216,760.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 92.3%: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով փաստացի իրականացվել է 49,405.8 հազար դրամի ծախս՝ նախատեսված 77,566.7 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 63.7%-ով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեգիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի

նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 140,458.6 հազար դրամ՝ նախատեսված 146,277.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 96.0%, կամ 4,981.3 հազար դրամով ավելի նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը:

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 16,010.5 հազար դրամ՝ նախատեսված 26,311.4 հազար դրամի դիմաց, ինչը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել խմելու ջուր, մեկանգամյա օգտագործման բաժակներ, տնտեսական ապրանքներ:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 27,499.2 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 66,174.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 41.6% և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման և COVID-19 համաճարակով պայմանավորված ախտահանիչ նյութերի, դիմակների ձեռք բերման ծախսերը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 252,540.0 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 252,540.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100.0%: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերի ձեռքբերումը, ընթացիկ այլ աշխատանքներ:

Այլ նպաստներ քյուջեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 40,528.0 հազար դրամ՝ նախատեսված 53,270.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում «Երևան քաղաքի ավագանու անդամներին դրամական փոխհատուցում տրամադրելու մասին»

Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 27-ի N 28-Ա և 2021 թվականի հոկտեմբերի 26-ի 454-Ա որոշումներով սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչպես նաև մեկ անձի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվել է խեղման նպաստ:

Ընթացիկ դրամաշնորհներ պետական առևտրային կազմակերպություններին հոդվածով ծախսը կազմել է 10,783,3 հազար դրամ նախատեսված 11,763.6 հազար դրամի դիմաց՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին երկու ուղղություններով կազմակերպելու համար:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 12,160.3 հազար դրամ՝ նախատեսված 13,822.6 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռք բերված թվով 211 հատ CK6860HGN <<ZHONGTONG>> մակնիշի ավտոբուսների համար հաշվառման, գրանցման ծախսերը:

Այլ ծախսեր հոդվածով նախատեսված 26,735.1 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 82,205.1 հազար դրամ՝ նախատեսված 131,602.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 62.5%, ինչը 4,971.4 հազար դրամով պակաս է 2020 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով նախատեսված 86,640.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 2,770.5 հազար դրամ, որը ուղղվել է աշխատակազմի ստորաբաժանումներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը:

Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով փաստացի ծախսը կազմել է 50,841.0 հազար դրամ՝ նախատեսված 53,500.0 հազար դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում իրականացվել է կիբեռ անվտանգության համակարգի ձեռքբերում, Երևան քաղաքի բյուջեի մշակման համակարգչային ծրագրի արդիականացում, լրամշակում և ՀԾ-Ձեռնարկություն

համակարգ 9 աշխատատեղի համար ծառայությունների ձեռք բերում, ինչպես նաև հակավիրուսային համակարգի ծրագրային փաթեթների ձեռքբերում:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 72,225.1 հազար դրամ՝ նախատեսված 113,853.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 63.4%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Երևանի քաղաքապետարանի ջեռուցման համակարգի հիմնանորոգման, Կենտրոն վարչական շրջանի նախասրահի, Աջափնյակ, Ավան, Էրեբունի, Նոր Նորք, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շենքերի ընթացիկ վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

3. Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց ծախսը կազմում է 9,709.6 հազար դրամ՝ նախատեսված 14,000.0 հազար դրամի դիմաց: Fitch միջազգային վարկանիշային գործակալությունը Երևան քաղաքին շնորհվել է երկարաժամկետ «B+» վարկանիշը՝ «Կայուն» կանխատեսմամբ:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 79,585.2 հազար դրամ՝ նախատեսված 96,749.9 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 82.3%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորություններ:

5. Նախագծային աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 95,408.3 հազար դրամ՝ նախատեսված 230,217.0 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2020 թվականի փաստացի ցուցանիշից 20,302.0 հազար դրամով պակաս: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

6. Գլխավոր հատակագծի ճշգրտում և Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 10,000.0 հազար դրամ հաստատված 140,000.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 7.1%, որի շրջանակներում իրականացվել է Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական աշխատանքներ:

7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 71,754.9 հազար դրամ՝ նախատեսված 104,772.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 68.5%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

8. Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 28,992.1 հազար դրամ՝ նախատեսված 69,900.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 41.5%, որոնց շրջանակներում վառելիքով, տրանսպորտային միջոցներով և գրասենյակային նյութերով աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային զինկոմիսարիատներին և քաղաքացիական պաշտպանության կառույցներին: 18,327.8 հազար դրամ գումարով իրականացվել է Երևան քաղաքում թվով 10 նոր հիդրանտների կառուցման, ինչպես նաև գոյություն ունեցող թվով 38 հիդրանտների նորոգման աշխատանքներ:

9. Այլընտրանքային աշխատանքային ծառայություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 13,410.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 13,410.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 100.0%: Ծրագրով իրականացվել է հաշվետու տարվա ընթացքում զորակոչի արդյունքում Երևանի ենթակայության կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին կատարվող վճարումները:

10. Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն ծրագրով նախատեսված 13,200.0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 6,018.7 հազար դրամ՝ 45.6%:

11. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,385.5 հազար դրամ՝ նախատեսված 44,176.0 հազար դրամի դիմաց և իրականացվել են

2020թվականին սկսված Ա.Միկոյանի փողոցի Դոմուս առևտրի կենտրոնի հարակից տարածքում խորքային հորի կառուցման աշխատանքներ:

12. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի Էներգաարդյունավետության ծրագիր» և Արևելյան Եվրոպայի Էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի աջակցությամբ իրականացվող Երևանի Էներգաարդյունավետության դրամաշնորհային ծրագիր և Երևանի Էներգաարդյունավետության ծրագրի համաֆինանսավորում ծրագրերով իրականացվել է 1,699,847.2 հազար դրամի ծախս նախատեսված 2,112,766.7 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում հիմնանորոգման աշխատանքներ են սկսվել և իրականացվել Երևանի թվով 14 մանկապարտեզներում:

13. Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար դրամաշնորհային ծրագիր և Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար ծրագրի համաֆինանսավորում ծրագրերով կատարված ծախսը կազմում է 125,843.3 հազար դրամ նախատեսված 649,354.4 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 19.4%: Ծրագրի շրջանակներում շուրջ 49 շենքերում իրականացվել են շենքերի ներքին և արտաքին տարածքների լուսավորման համակարգերի տեղադրման աշխատանքներ, թվով 55 բազմաբնակարան շենքերում ծրագրի իրականացման ուղղությամբ իրականացվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, թվով 49 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներին տեղադրվել են արևային ֆոտովոլտային կայաններ, ինչպես նաև 55 անապահով ընտանիքներին տրամադրվել են շուրջ 580 տնտեսող լամպեր:

14. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,548,268.7 հազար դրամ՝ նախատեսված 3,571,893.8 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 99.3%, ինչը պակաս է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 131,744.3 հազար դրամով, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայթերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 851,2 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի նորոգման և ճաքալցման աշխատանքներ և թվով 221 դիտահորերի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև փողոցների 402.2 գծմ ճաքալցման աշխատանքներ:

15. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 98,300.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 150,000.0 հազար դրամի դիմաց, ինչը պակաս է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 22,068.9 հազար դրամով: Իրականացվել է 13476.3քմ փողոցների հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

16. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 204,461.2 հազար դրամ՝ նախատեսված 239,537.5 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.4%, որով բոլոր վարչական շրջաններում շուրջ 20,595.0 գծմ եզրաքարերի ընթացիկ նորոգման, ինչպես նաև փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար:

17. Հենապատերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 91,983.0 հազար դրամ՝ նախատեսված 184,185.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 49.9%, ինչը ավել է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 45,646.0 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են մասնագիտական ուսումնասիրության արդյունքում առաջնահերթ և հրատապ հիմնանորոգման ենթակա հենապատեր՝ թվով 27 հասցեներում:

18. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 28,055.9 հազար դրամ՝ նախատեսված 74,434.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում կատարվել են «Բարեկամություն» մետրոյի կայարանի ստորգետնյա հետիոտնային անցման երկու մուտքերի աստիճանների վերանորոգման աշխատանքներ:

19. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 153,061.0 հազար դրամ՝ նախատեսված 173,700.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 41 կամուրջների, էստակադաների, հետիոտն վերգետնյա անցումների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների և ուղետարերի նորոգման, շահագործման ու պահպանման աշխատանքները, իսկ 63,561.0 հազար դրամով Զովունի-Թբիլիսյան խճուղու «Կորեայի ձոր»-ում Հրազդան գետի վրա իրականացվել են հին կամրջի հիմնանորոգման և նորի կառուցման աշխատանքներ:

20. Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 6,841.3 հազար դրամ՝ նախատեսված 9,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման, բարեկարգման և Երևանյան լճի մաքրման աշխատանքներ:

21. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 613,013.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 884,833.9 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 69.3%, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի փողոցների ճանապարհի նոր մայթերի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի փողոցների մայթերի վերանորոգման (սալիկապատման) աշխատանքներ (մասնավորապես, Հալաբյան փողոցի վերջնամասի մայթի, Նազարբեկյան թաղամասի ծառուղու, Գյուլիբեկյան Վաղարշյան հատվածի մայթի, թիվ 145 դպրոցի տարածքի նոր մայթի կառուցում, Բաղրամյան փակուղու մայթի վերանորոգում, Դուրյան 45, Աճառյան 26, Ավան-Առինջ 1 թաղ. 2/11, Ալմա Աթա փողոցի մայթ, Խուռյակով փողոցի մայթ, Աթենքի փողոցի, Կողբացի փողոցի մայթերի հիմնանորոգում):

22. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 220,306.4 հազար դրամ՝ նախատեսված 237,991.3 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են «Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարանի քարե շինության հիմնանորոգում, շուրջ 486 դիտահորերի կափարիչների ուղղում, ինչպես նաև Մյասնիկյան, Սարալանջ փողոցների քարաթափումներից կանխարգելիչ ցանցապատում:

23. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմում է 412,078.5 հազար դրամ նախատեսված (ճշտված) 412,761.7 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.8 %: Ծրագրի շրջանակներում 52,761.7 հազար դրամ գումար տրամադրվել է Երևանտրանս ՓԲԸ-ին որպես սուբսիդիա՝ Ազատության պողոտայի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար, իսկ 360,000.0 հազար դրամը՝ Փարքինգ Սիթի սերվիս ՓԲԸ-ին:

24. Թերահարթակների կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,911.7 հազար դրամ՝ նախատեսված 23,732.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը

կազմել է 20.7%, որի շրջանակներում Երևան քաղաքի Աջափնյակ, Արաբկիր, Շենգավիթ վարչական շրջանների փողոցների խաչմերուկների մայթերի և բազմաբնակարան շենքերի մուտքերում կառուցվել են նոր թեքահարթակներ:

25. Տրանսպորտային համակարգի արդիականացում ծրագրով նախատեսված 16,696,659.6 հազար դրամի դիմաց կատարվել է 14,379,996.4 հազար դրամի ծախս: Նշված գոյմարի շրջանակներում 10,776,601.5 հազար դրամով կատարվել են վճարումներ 2020 թվականին ձեռքբերված թվով 74 ավտոբուսների, ինչպես նաև 2021 թվականին ձեռք բերված թվով 211 ավտոբուսների դիմաց, 16,632.0 հազար դրամով նշված ավտոբուսների համար ձեռք է բերվել ծրագրային համակարգ, իսկ 3,586,762.9 հազար դրամով իրականացվել են ավտոբուսների մաքսազերծման վճարները, ԱԱՀ-ն:

26. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 107,193.5 հազար դրամ՝ նախատեսված 446,232.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 24.0%, որից 4,820.0 հազար դրամով ձեռք են բերվել և տեղադրվել նստարաններ և աղբամաններ, 20,440.3 հազար դրամով թվով 14 հետիոտնային լուսացուցային համակարգերի ձեռքբերման և տեղակայման աշխատանքներ, 47,696.6 հազարն դրամով ձեռք է բերվել թուջե արգելապատնեշներ, 21,500.5 հազար դրամով ձեռքբերվել և տեղադրվել են մետաղական ճաղավանդակներ, 11,380.0 հազար դրամով իրականացվել են նստարանների ամբողջական և մասնակի վերանորոգման աշխատանքներ, 21,497.0 հազար դրամով՝ հետիոտնային կանչի լուսացույցի համար վահանակով և ուղղագիծ սյուներով ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ:

27. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 654,120.9 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 656,899.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.6%: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողություն,

Իսակով-Արշակունյաց պողոտաները իրար միացնող ճանապարհահատվածի նախագծային աշխատանքներ, ծրագրի ֆինանսական աուդիտ, SS սպասարկում:

28. Կայանատեղիների կառուցում և վերակառուցում ծրագրով իրականացվել է 31,796.0 հազար դրամի ծախս՝ Երևանտրանս ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղիի նոր մուտքի և պահակակետի կառուցման նպատակով, նախատեսված 49,200.0 հազար դրամի դիմաց:

29. Վերելակների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,748,137.0 հազար դրամ՝ նախատեսված 3,251,411.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 84.5%, որի շրջանակներում 512,946.0 հազար դրամով ձեռք է բերվել 54 նոր վերելակ, 2,140,204.7 հազար դրամ վճարվել է 2020 թվականին ձեռք բերված և չվճարված, ինչպես նաև շուրջ 60 նոր տեղադրված վերելակների դիմաց, իսկ 94,986.3 հազար դրամով թվով 8 վարչական շրջաններում իրականացվել են վերելակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

30. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,855,275.9 հազար դրամ՝ նախատեսված 2,862,392.6 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

31. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 628,315.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

32. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ, ինչպես նաև Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) իրականացվել է 315,965.6 հազար դրամի ծախս:

33. Զբոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսված 23,100.0 հազար դրամի դիմաց իրականացվել է 14,830.0 հազար դրամի ծախս՝ Երևան քաղաքի թեմատիկ քարտեզի մշակման, ձևավորման և անհրաժեշտ տպագրական աշխատանքների իրականացման նպատակով, Երևան քաղաքի պաշտոնական զբոսաշրջային կայքի և հավելվածի ստեղծման, մշակման և պահպանման, ինչպես նաև ռուսերեն լեզվով ուղեցույցի կազմման և տպագրության նպատակով:

34. Դրոշների տեղադրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,075.5 հազար դրամ՝ նախատեսված 45,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 51.3%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել են դրոշներ Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում, մանկապարտեզներում, երաժշտական և արվեստի դպրոցներում, այլ մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում, իրականացվել են ՀՀ դրոշների փոխման, հիմնային պատվանդանների նորոգման աշխատանքներ:

35. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 168,100.0 հազար դրամ՝ նախատեսված 168,100.0 հազար դրամ գումարի դիմաց, ինչն ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

36. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով փաստացի ծախսը կազմել է 402,809.8 հազար դրամ՝ նախատեսված 410,245.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.2%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել կրթական, մշակութային, բժշկական և այլ՝ թվով 60 կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, ՓԲԸ, հասարակական կազմակերպություն և այլն), մասնավորապես՝ 61,550.0 հազար դրամն ուղղվել է Ախտահանման կենտրոն ՓԲԸ-ի կողմից տրանսպորտային միջոցների ախտահանման աշխատանքների փոխհատուցմանը, 20,000.0 հազար դրամը Ապրելու Արցախի հիմնադրամ ԲԿ-ին՝ 100տուն Արցախում ծրագրին աջակցելու նպատակով, 7,317.9 հազար դրամը գրադարանային ֆոնդի համալրման գործընթացի կազմակերպման աշխատանքներին

աջակցելուն, 22,000.0 հազար դրամը Երևան օֆեն-21 շախմատի միջազգային մրցաշարը կազմակերպելու նպատակով, 61,094.2 հազար դրամը Քանաքեռ-Ձեյթուն ծննդատուն ՓԲԸ-ի ազատված աշխատակիցների վերջնահաշվարկի գումարների փոխհատուցման համար, 50,000.0 հազար դրամը Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ ՓԲԸ-ի նոր անգիոգրաֆիկ սարքի ձեռքբերմանն աջակցության նպատակով, 30,000.0 հազար դրամը՝ Քաղաքաշինություն ՓԲԸ-ի կարիքների համար գեոդեզիական գործիքային համակարգի ձեռք բերմանն աջակցության, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել Թափոնային արվեստ ծրագրի շրջանակներում 4 թափոնային քանդակի ստեղծման և տեղադրման աշխատանքներին, ռորոտաշինության միջազգային մրցույթի կազմակերպմանը, Արտավազը մրցանակաբաշխությունը կազմակերպելու նպատակով, Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի օդափոխության համակարգի աշխատանքների աջակցելու նպատակով, Ազատության հրապարակում կազմակերպվող Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված համերգին աջակցելու նպատակով, և այլն...

37. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 18,470,775.5 հազար դրամ նախատեսված 4,541,000.00 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 406.8%:

38. Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ ծրագրով կատարվել է 35,743.0 հազար դրամի ծախս նախատեսված 44,370.0 հազար դրամի դիմաց, և կատարողականը կազմում է 80.6%: Գումարը որպես սուբսիդիա տրամադրվել է <<Քաղաքաշինություն>> ՓԲԸ-ին հատակագծի կազմման աշխատանքների համար:

39. Ներդրումային ծրագրերի իրականացման ծրագրով փաստացի ծախսը կազմել է 114,120.0 հազար դրամ՝ նախատեսված 133,000.0 հազար դրամի դիմաց, կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.8%, որն էլ ամբողջությամբ ուղղվել է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի սուբսիդավորմանը:

40. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 10,588.7 հազար դրամ՝ նախատեսված 14,102.7 հազար դրամի դիմաց, որից 4,692.2 հազար դրամը հատկացվել է թվով 3 վարչական շրջանների համատիրություններին

վարչական շրջաններում աղբահանության վճարների գանձման դիմաց, իսկ 5,896.4 հազար դրամը՝ աղբահանության վճարի անդորրագրերի տպագրական աշխատանքների ձեռքբերմանը:

41. Տոնավաճառների կազմակերպում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 79.5 հազար դրամ ծրագրված 984.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում իրականացվել են գյուղատնտեսական տոնավաճառի տաղավարների արդիականացման աշխատանքներ:

